ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՎԱԾ ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

11 հունիսի 2014 թվականի | թիվ 11/11 | **քաղ. Երևան**

ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ՄԱՔՍԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՃՇԳՐԻՏ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԴՐԱ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիան *որոշեց*՝

1. Հաստատել Ըստ ՄՄ ԱՏԳ ԱԱ-ի ապրանքների դասակարգման վերաբերյալ որոշումների տեղեկատուի կառուցվածքը (կցվում է):

2. Բելառուսի Հանրապետության ՊՄԿ-ին, Ղազախստանի Հանրապետության ՖՆ ՄՀԿ-ին և Ռուսաստանի ԴՄԾ-ին՝ նախատեսել տեղեկատվության առկայություն՝ Մաքսային միության անդամ պետությունների մաքսային մարմինների կողմից կիրառվող ծրագրային միջոցներում՝ Ըստ ՄՄ ԱՏԳ ԱԱ-ի ապրանքների դասակարգման վերաբերյալ որոշումների տեղեկատուի հաստատված կառուցվածքին համապատասխան:

3. Ռուսաստանի ԴՄԾ-ին Բելառուսի Հանրապետության ՊՄԿ-ի և Ղազախստանի Հանրապետության ՖՆ ՄՀԿ-ի հետ համատեղ՝ 2015 թվականի 1-ին եռամսյակում Մաքսային միության անդամ պետությունների միավորված կոլեգիայի ընթացքում ներկայացնել Ըստ ՄՄ ԱՏԳ ԱԱ-ի ապրանքների դասակարգման վերաբերյալ որոշումների տեղեկատուի ձևավորման և կիրառման կանոնակարգի նախագիծը:

Նախագահի տեղակալ՝ **Ա.Ֆ. Շպիլևսկի**
Նախագահի տեղակալ՝ **Գ.Կ. Ամրին**
Ռուսաստանի ԴՄԾ-ի ղեկավարի առաջին տեղակալ՝ Միավորված կոլեգիայի անդամ՝ **Վ.Մ. Մալինին**

Հավելված
Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի թիվ 11/11 որոշման

Ըստ ՄՄ ԱՏԳ ԱԱ-ի ապրանքների դասակարգման վերաբերյալ որոշումների տեղեկատուի կառուցվածքը

Ապրանքի ծածկագիրը՝ նշված	Ապրանքների մասին հայտարարագրի էլեկտրոնային պատճենի ֆայլը	Ապրանքի ծածկագիրը՝ ճշգրտված	Ըստ դասակարգման որոշման տեսաներածված (սկանավորված) պատճենը**	Ապրանքի առևտրային անվանումը	Ապրանքի դասակարգման հատկանիշները, որոնք ազդում են ըստ դասակարգման որոշումն ընդունելու վրա	Ապրանքի բնութագրերը, որոնք անհրաժեշտ են արտացոլել ակտում մաքսային տեսազննում կամ զննում անցկացնելիս**	Ապրանքի գրաֆիկական պատկերը պարունակող ֆայլ**	Մաքսային փորձաքննություն նշանակելու դեպքում մաքսային փորձագետին ներկայացվելիք հարցերը*	Փորձագետի եզրակացության տեսաներածված պատճենը**	Դատական պրակտիկա*	Դատարանի վճռի տեսանեռածված պատճենը**	Լրացուցիչ տեղեկատվություն*
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13

1. Նշվում է ապրանքի՝ ապրանքների մասին հայտարարագրում նշված ծածկագիրը:
2. Վանդակը պարունակում է ապրանքների մասին հայտարարագրի էլէկտրոնային պատճենի ֆայլը:
3. Նշվում է ապրանքի ծածկագիրը՝ ըստ դասակարգման վերաբերյալ որոշման:
4. Վանդակը պարունակում է դասակարգման վերաբերյալ որոշման տեսաներածված պատճենը:
5. Նշվում է ապրանքի՝ ապրանքների մասին հայտարարագրի 31-րդ վանդակում նշված առևտրային (կոմերցիոն) անվանումը:
6. Նշվում են դասակարգման վերաբերյալ որոշումից ապրանքների բնութագրերը:
7. Նշվում են ապրանքների բնութագրերը (հատկանիշները), որոնք անհրաժեշտ են սահմանել՝ մաքսային զննում կամ տեսազննում անցկացնելիս:
8. Վանդակը պարունակում է ապրանքի գրաֆիկական պատկերով ֆայլ:
9. Մաքսային փորձաքննություն նշանակելու դեպքում նշվում են մաքսային փորձագետին ներկայացվելիք հարցերը:
10. Վանդակը պարունակում է փորձագետի եզրակացության տեսաներածված պատճենը:
11. Նշվում են ապրանքների վերաբերյալ դատական վճիռների համարներն ու ամսաթվերը:
12. Վանդակը պարունակում է դատարանի վճռի տեսաներածված պատճենը:
13. Նշվում է լրացուցիչ տեղեկատվությունը և (կամ) հատկանիշն այն դեպքում, երբ Մաքսային միության անդամ պետության մաքսային մարմնի կողմից Տեղեկատու են մուտքագրվում այլ տեղեկություններ, որոնք կարևոր են ապրանքների դասակարգման ճշգրտության նկատմամբ հսկողության համար, օրինակ՝ ապրանքների դասակարգման վերաբերյալ նախնական որոշումների մասին: Նախնական որոշման մասին տեղեկատվությունը նշելու դեպքում Տեղեկատուն լրացվում է՝ հաշվի առնելով հետևյալ առանձնահատկությունները՝ 1-ին վանդակում նշվում է նախնական որոշում կայացնելու մասին դիմումից ապրանքի ծածկագիրը (տեղեկատվության առկայության դեպքում). 3-րդ վանդակում նշվում է ապրանքի դասակարգման վերաբերյալ նախնական որոշման 6-րդ վանդակից ապրանքի ծածկագիրը. 5-րդ վանդակում նշվում է ապրանքի դասակարգման վերաբերյալ նախնական որոշման 5-րդ վանդակից ապրանքի անվանումը. 6-րդ վանդակում նշվում են ապրանքի

դասակարգման վերաբերյալ նախնական որոշման 7-րդ վանդակից ապրանքի բնութագրերը. 4-րդ վանդակը կարող է պարունակել ապրանքի դասակարգման վերաբերյալ նախնական որոշման տեսաներածված պատճենը:

* Տվյալ դաշտը լրացվում է տեղեկատվության առկայության դեպքում
** Տվյալ դաշտը լրացման համար պարտադիր չէ